«Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

____ _____ 2017 թիվ ____-Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

_____ ____ N ____-Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ

1. Երևան քաղաքում իրականացվող վարսավիրական ծառայությունների մատուցման, հանրային սննդի օբյեկտների (բացառությամբ՝ մինչև 50 քառ. մետր սպասարկման սրահի մակերես ունեցող օբյեկտների), ավտոտեխսպասարկման կայանների (կետերի), ավտոկանգառների, բիլիարդ խաղի, սեղանի թենիս խաղի, մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով առևտրի, մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման, ատամնաբուժական, ատամնատեխնիկական գործունեության տեսակների մասով արտոնագրային հարկի հաշվարկման համար լրացուցիչ գործակիցների կիրառման նպատակով հիմք ընդունվող՝ Երևան քաղաքի գոտիները նկարագրվում են հետևյալ կերպ՝

Գոտին	Տարածքը
Առաջին	Առաջին գոտու տարածքը սահմ Մաշտոցի պողոտայով սկսած՝ Գրի փողոցի հետ հատումից մինչև Սա Սարյան և Մոսկովյան փողոցներով Բաղրամյան պողոտա, Մարշալ պողոտայով մինչև Մարշալ Բաղրա փակուղի, այնուհետ Իսահակյան Թամանյան փողոց, Թամանյան փ Անտառային փողոց, Անտառային Մատենադարան, այնուհետ՝ Տերյ փողոցների վերջնամասով՝ ներա պուրակը, Աբովյան փողոցով մի փողոց, Կորյունի և Նալբանդյան մինչև Խանջյան փողոցի հետ հատ Ագաթանգեղոս, Գրիգոր Լուսավոր մինչև Մաշտոցի պողոս
Երկրորդ	Երկրորդ գոտու ներքին սահմանն են առաջին գոտու տարածքը սա փողոցների հետ, իսկ արտաքին անցնում են Աբովյան պուրակո Հերացու փողոցով մինչև Կորյունի հատվելը, այնուհետ Չարենցի փողոցներով, Տիգրան Մեծի պող Քրիստափորի փողոց, Քրիստափ Արշակունյաց պողոտայով մինչև 2-րդ նրբանցքի հետ հատվելը, Արշ նրբանցքով, Արտաշատի ջրան Հաղթանակի կամուրջ, այնուհետ կամրջով, Մաշտոցի պողոտայի ս Սուրբ Սարգիս եկեղեցու շրջակայ Ձորագյուղի տարածքը, այնուհե

	փողոցով մինչև Ձորափի փողո փողոցով մինչև Ուրուգվայի հրաա Պարոնյան և Պռոշյան փողոցներով փողոց, Այգեձորի փողոցով մին Բաղրամյանի 2-րդ նրբանցք, Մարշ 2-րդ նրբանցքով, Մարշալ Բաղրա անցուղով, Սոսեի փողոցով մինչև փողոց, այնուհետ Անտառային փ Թամանյան փողոցի հետ հ
Այլ	Երևան քաղաքի վարչական տ ներառված՝ առաջին և երկրորդ չընդգրկված տարածք՝ բացառո հավելվածի 2-րդ կետում ներկայաց

2. Երևան քաղաքում հանրային սննդի (բացառությամբ՝ մինչև 50 քառ. մետր սպասարկման սրահի մակերես ունեցող օբյեկտների) կազմակերպման գործունեության համար՝ բացի սույն հավելվածի 1-ին կետով սահմանված տարածքներից՝

1) առաջին գոտու տարածքում ներառվում են նաև Մյասնիկյան պողոտան և Աճառյան փողոցները՝ մինչև Աճառյան 2-րդ փակուղու հետ հատվելը և Հրազդանի կիրճն ամբողջությամբ.

2) երկրորդ գոտու տարածքում ներառվում են նաև Լենինգրադյան և Ջանիբեկյան փողոցներն ու Սիլիկյան թաղամասը: